

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**ՀԱՄՏՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԻՒՆ**

Բոլոր ժամանակներն աւելի մենք այսօր հրաւիրուած ենք վերադառնալու մեր հայրերու հաւատքին: Այն հաւատքին, որ 301 թուին հռչակուեցաւ եւ որուն մասին խօսուեցաւ ամբողջ աշխարհին մէջ (համեմատ՝ Հո 1.8): Այն հաւատքին, որ մեզ արդար կը յայտարարէ (Հո 1.17, 3.28, 4.24): Այն հաւատքին, որով Աստուծոյ ժառանգորդ կը դառնանք (Հո 4.16): Այն հաւատքին, որ ծնունդ կ'առնէ Աստուծոյ խօսքին փարոզութիւնը լսելէն (Հո. 10.17): Այն հաւատքին, որ կ'օգնէ մեզի համբերութեամբ տանելու այլոց տկարութիւնները (Հո. 15.1): Այն հաւատքին, որ խաղաղութեամբ կը լեցնէ մեզ կեանքի փոթորիկներուն դիմաց (Հո. 15.13): Եւ այդ հաւատքը անող հաւատքն է: Տեղեւոր ընող հաւատքը՝ մեռած հաւատք է: Անող հաւատքի մասին է, որ կը խօսէին աշակերտները երբ ըսին Յիսուսի. «Տէր, աւելցուր մեր հաւատքը» (Ղկ. 17.5):

Փաստը, որ աշակերտները անող հաւատքի մասին է, որ կը խօսէին, նոյնիման Տիրոջ պատասխանն էր անոնց. Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք, կարող պիտի ըլլաք հրամայել այս թթենիին, որ արմատախիլ ըլլայ ու ծովը նետուի, եւ պիտի հնազանդի ձկնը: Բոլորս ալ գիտեմք, թէ ոեւէ սերմնահատիկ, օժտուած է ծլելու եւ անելու ներքին կարողականութեամբ: Տէրը սերմնահատիկի օրինակը տալով, խորքին մէջ անող հաւատքի մասին է, որ կը խօսի, եւ ցոյց կու տայ իր աշակերտներուն, եւ հետագայ իր բոլոր հետեւորդներուն, թէ պէտք է մնայուն կերպով անին իրենց հաւատքին մէջ:

Մենք կ'անհրաժեշտ մեր հաւատքին մէջ:

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**Հ ԵՐ ԱՅ ԱՐ ՈՒԹԻՒՆ**  
(Փոքրիկի երկար մազ կտրելու ուխտ)



Մեր ժողովուրդի ուխտի արտայայտութիւններէն մին եղած է մանչ զաւակի ծնունդէն ետք՝ երեք, հինգ, կամ եօթը տարիներ անոր մազը երկարելը:

Եկեղեցին իր ծիսարան Մաշտոցին մէջ մասնաւոր կանոն սահմանած է հերահատութեան համար:

Երբ ճշդուած ուխտի ժամանակաշրջանը կ'աւարտէր, փոքրիկը կամ պատանին եկեղեցի կը բերէին եւ կանոնը կը կատարուէր:

Քահանայ հայրը կարդալէ ետք կանոնական Աւետարանն ու աղօթքը, մկրատով խաչածել կը կտրէր փոքրիկին մազերը ըսելով.- «Այս (անունը) ծառայի մազերը կը կտրուին՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով»: Ապա փոքրիկը ստանալէն ետք քահանայ հօր օրհնութիւնը, ծնողքը սափրիչի կը տանէր եւ մազերը կտրել կու տային:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ

ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023** ԹԻՒ 37

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 13.2-11: Բ. Կր. 7.4-16: Մր. 7.31-37

**ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ԽԱԶԻ ՊԱՅՈՑ**  
**ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ**  
**7.31-37**

Յիսուս Տիրոսի սահմաններէն մեկնելով, Սիդոնի վրայով անցաւ Գեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլիայի ծովեզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը խնդրելով, որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբոխէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա», որ կը նշանակէ «բացուէ»: Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին, որ ոեւէ մէկուն չըսէն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր, որ չտարածէն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ: Տեսէք, խուլներուն իսկ լսել կու տայ եւ համրներուն՝ խօսիլ»:

\*\*\*\*\*

«Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ: Տեսէք, խուլներուն իսկ լսել կու տայ եւ համրներուն խօսիլ»: Այս վկայութիւնը արձանագրուեցաւ ժողովուրդին կողմէ, որոնք ներկայ եղան եւ տեսան այն մեծ հրաշքը, որ կատարեց Յիսուս այն խուլ եւ համր մարդուն, որ իր սիրելիներուն կողմէ առաջնորդուեցաւ Յիսուսի մօտ: Յիսուս ուրախութեամբ ընդառաջեց եւ կատարեց հրաշքը: Խուլը եւ համրը կը խորհրդանշէ այն բոլոր մարդիկը, որոնք ականջ ունին չեն լսեր եւ բերան ունին եւ չեն խօսիր: Բոլորս ալ հրաւիրուած ենք վկայելու Յիսուսի մասին: Վկայ դառնալու համար նախ պէտք է Յիսուսի հասնիլ եւ ապա իր անունը տարածել ամբողջ ժողովուրդին: Յիսուս կը հրաւիրէ մեզի իր տուած շնորհները օգտագործելու իր փառքին համար: ԴԻՄԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՐ ԽՈՒՎ ԵՒ ՀԱՄՐ ՎԻՃԱԿԷՆ ԲԺՇՎՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՆՈՒ

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՆԻԿԻՌՅ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ

318 ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

**Ե**կեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, սօսնի ձեռով կը կատարուի հայոց եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, Կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Աղեքսանդրիացի երէջ Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուած ըլլալը: Ըստ Արիոսին Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիստակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մոլար ու հերետիկոսական շարժումը, դատաւարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ ճշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»-ը:

Նիկիոյ հանգանակը աւելի ճշիւ խացած ձեռով կ'ըսուի եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք: Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնէայի համար քրիստոնէական հաւատքի եւ դաւանութեան բանաձեւերն են:

Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ս. հոգւոյ, եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեռելներու յատուցութեան, յաւիտենական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անմահութեան մասին քրիստոնէաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը եկեղեցւոյ մէջ կ'երգուին հայրապետներու նուիրուած շարականներ, ուր անոնց ներբողը հիւսւած է, որպէս հաւատքի հիմքերը հաստատողներ:

\*\*\*\*\*

## Ս. ՀՈԳԻՈՎ ԶՕՐԱՆԱԼՈՒ ԱՂՕԹՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը: Ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի Կուր տեղ չյոգնինք, այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկըրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ բուողորմութեամբդ հատուցանէ՛ մեզի, առատապէս: Բու ամենապօր աջիդ հովանիին տակ ծածկէ՛ մեզ, եւ Սուրբ հոգիիդ պօրութեամբը պօրացու՛ր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեզ եւ բու բարերարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի բու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ բու փառքը կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

# Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## Խոնարհները տեսող Բարձրեալը

«Թէեւ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ» (Սղ. 138.6):

Փա՛ռք ու փառաբանութիւն մեր Աստուծոյն, որուն ուշադրութիւնը կեդրոնացած չէ մեծագործ ու մեծամուն մարդոց վրայ, այլ՝ համեստ, հեզ ու խոնարհ մարդոց վրայ: «Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ»: Հարուստ է, բայց աղքատը կը նշմարէ:

Սուրբ է, բայց մեղաւորներուն մօտենալու չի քաշուիր: Հօր է, բայց չ'ոտնահարեր տկարը: Ամենակարող է, բայց չի քննադատեր մեր տկարութիւնները: Մարդը այդպէս չէ: Մարդը որոշ բարձր դիրքի հասնելէ ետք, կը սկսի անտեսնել իր հաւասարը, լքել կարիքի մէջ եղողը, մոռնալ տկարը: Տէրը երբեք պիտի չմոռնայ մարդոց աչքերէն ու ծափահարութիւններէն հեռու կատարած մեր պզտիկ գործերը:

## ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ

Աստուածաշունչը մեր երկնաւոր Հօր սիրոյ նամակն է ուղղուած մեզմէ իւրաքանչիւրին: Կրնա՞նք ըսել, թէ կը սիրենք մեր երկնաւոր Հայրը, երբ սեր ու հետաքրքրութիւն չունինք իր սիրոյ նամակին՝ Աստուածաշունչին հանդէպ: Աստուածաշունչի գիտութիւնն է, որ մեզ Աստուծոյ ճշմարիտ գիտութեան կ'առաջնորդէ:

Առանց Աստուծոյ Խօսքի գիտամթերքին՝ մարդը դատապարտուած է պարտութիւն կրելու Զարին դէմ մղած իր պայքարին մէջ:

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

## ԵՐԲ ՄԱՐԴՈՃ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ՄՊՐԻՍ, Կարդա՛ սարսոս 55

Ականջ տուր աղօթքիս, ո՛վ Աստուած, խնդրանքներս մի՛ անտեսեր: Նայէ՛ ինձի եւ պատասխան տուր: Հոգիս տրտում կ'ալեկոծի եւ խռովքի կը մատնուիմ՝ թշնամիին սպառնալիքներէն եւ ամբարիշտներու տուած նեղութիւններէն, որովհետեւ անիրատւութիւն կը թափեն գլխուս, եւ բարկութեամբ ոյս կը պահեն ինձի դէմ: Միրոս տագնապի մէջ է, մահուան սարսափը պատեր է զիս: Ահ ու դողը բռներ է զիս եւ սոսկումը զիս համակեր: Երանի, թէ աղանիի պէս թե ունենայի, հեռու թռչէի, հանգիստ գտնէի: Այո՛, հեռու՝ հեռու՛ փախչէի, անապատի մէջ բնակէի: Շուտով ինձի ապաստան գտնէի սաստիկ հովէն ու փոթորիկէն:

Խառնէ՛, ո՛վ տէր, բաժնէ՛ անոնց լեզուները, որովհետեւ քաղաքին մէջ միայն վայրագութիւն եւ հակառակութիւն կը տեսնեմ, որոնք անոր պարիսպներուն վրայ կը շրջին օր ու գիշեր, եւ զայն կը լեցնեն յանցագործութեամբ ու դժբախտութեամբ, զայն կը լեցնեն աներածութեամբ:

ՄԻՇՏ ՄԱՂՄՈՍ ԿԱՐԿԱՆՔ ԵՒ ՄԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ ԱՂՕԹԵՆՔ